**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **10 հոկտեմբերի 2025թ.**

2025թ-ի սեպտեմբերի 19-ից հոկտեմբերի 10-ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Լ. Ավետիսյան՝ | Հիմնադրամի արտադրատնտեսական բաժնի ղեկավար, |
| Ա. Չոբանյան՝ | Հիմնադրամի պահեստապետ, |
| Ն. Շահնազարյան՝ | Հիմնադրամի ավագ հաշվապահ. |

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը:

**ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

**1.ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Ինտերակտիվ գրատախտակ Touch Screen TV Smart Board | 1000001 AMD | 2025-09-22 15:45:00 | 1200000 |
| 2 | Սառնարան | 199999 AMD | 2025-09-22 15:45:00 | 240000 |
| 3 | Միկրոալիքային վառարան | 60000 AMD | 2025-09-22 15:45:00 | 60000 |

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացում և բացումը, ինչպես նաև հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՁ Արմեն Մխչյան | ՀՀ, ք. Երևան. Լենինգրադյան 6, բն. 54 | mkhchyan.armen@gmail.com | 27972491 |
| 2 | ԱՅՓԻՍԵՔ ՍՊԸ | Շահումյան 16փ 20/1 | ipsec77@mail.ru | 01338107 |
| 3 | ԱՆՏԳԱ ՍՊԸ | ք. Երևան Խաղաղ Դոնի փող. 27շ. 46 բն. | antigaantiga05@gmail.com | 00536815 |
| 4 | ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ | Ք. Երևան Շևչենկոյի փողոց 1/14 | mkhitaryangnumner@gmail.com | 42117958 |
| 5 | ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ | Ք. Երևան, Խորենացի փ., շ. 72/12 | h_davo@mail.ru | 00474273 |
| 6 | ԱՄԷ Գրուպ ՍՊԸ | ք. Գյումրի, Ա. Շիրակացի 169 | amegroupllc.1@gmail.com | 05559572 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
3. Ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ՝ ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ-ի և ԱՄԷ Գրուպ ՍՊԸ-ի.

- ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի համաձայն մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին բավարարող իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի մոդելը և արտադրողի անվանումը, սակայն ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ-ի կողմից՝ 2-րդ չափաբաժնի մասով, առաջարկվող ապրանքի մոդելի փոխարեն լրացվել է արտադրողի անվանումը՝ BERG: Անհրաժեշտ է շտկել և սահմանված կարգով ներկայացնել հրավերի պահանջներին բավարարող առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:
- ԱՄԷ Գրուպ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին՝ հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնով սահմանվում է, որ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները պետք է ներկայացնեն իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հրավերի հավելված 1.3-ի, սակայն ԱՄԷ Գրուպ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթուղթը վերնագրված է որպես հրավերի հավելված 1.2, որը պետք է ներկայացնեն ՀՀ ռեզեդենտ չհանդիսացող մասնակիցները, միաժամանակ ներկայացված փաստաթղթում բացակայում են ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների համար հրավերի հավելված 1.3-ով սահմանված՝ «Ստորև ներկայացվում է մասնակցի անվանումը (ԱՄԷ Գրուպ ՍՊԸ-ի) իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» գրառումները: Անհրաժեշտ է շտկել և համակարգի միջոցով ներկայացնել պահանջվող փաստաթղթի շտկված տարբերակը՝ ապահովելով հրավերով սահմանված վավերապայմանների առկայությունը:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված այդպիսին չճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/հ | Չբ աղ | Ներկայացված հայտեր | Նախա հաշվա | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Կարգ ավիճ |
|---|---|---|---|---|---|---|

| | եց<br>րա<br>ծ<br>տե<br>ղ | | յին<br>գին | | | | | | | ակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱ<br>Հ | Գին | Արժեք | ԱԱ<br>Հ | Գին | Ընտր<br>ված<br>մասն<br>ակից<br>«X» |
| 1 | 1 | ԱՁ Արմեն Մխչյան Ապրանքի ամբողջական նկարագիր | 12000<br>00<br>AMD | 12000<br>00<br>AMD | 0 % | 12000<br>00<br>AMD | 75000<br>0 AMD | 0 % | 750000.<br>00 AMD | X |
| 1 | 2 | ԱՅՓԻՍԵՔ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր | 12000<br>00<br>AMD | 12500<br>00<br>AMD | 20<br>% | 15000<br>00<br>AMD | 77999<br>9 AMD | 20<br>% | 935998.<br>80 AMD | |
| 1 | 3 | ԱՆՏԻԳԱ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր | 12000<br>00<br>AMD | 10000<br>01<br>AMD | 20<br>% | 12000<br>01.2<br>AMD | 95499<br>8 AMD | 20<br>% | 1145997<br>.60<br>AMD | |
| 1 | 4 | ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր | 12000<br>00<br>AMD | 85000<br>000<br>AMD | 20<br>% | 10200<br>0000<br>AMD | 85000<br>000<br>AMD | 20<br>% | 102000<br>000.00<br>AMD | Մերժ<br>ված |
| 2 | 1 | ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր | 24000<br>0 AMD | 19999<br>9 AMD | 20<br>% | 23999<br>8.8<br>AMD | 19999<br>9 AMD | 20<br>% | 239998.<br>80 AMD | X |
| 2 | 2 | ԱՄԷ Գրուպ Ապրանքի ամբողջական նկարագիր | 24000<br>0 AMD | 24000<br>0 AMD | 0 % | 24000<br>0 AMD | 24000<br>0 AMD | 0 % | 240000.<br>00 AMD | |
| 2 | 3 | ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր | 24000<br>0 AMD | 85000<br>000<br>AMD | 20<br>% | 10200<br>0000<br>AMD | 85000<br>000<br>AMD | 20<br>% | 102000<br>000.00<br>AMD | Մերժ<br>ված |
| 3 | 1 | ԱՄԷ Գրուպ Ապրանքի ամբողջական նկարագիր | 60000<br>AMD | 60000<br>AMD | 0 % | 60000<br>AMD | 60000<br>AMD | 0 % | 60000.<br>00 AMD | X |

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցմամբ առաջարկել գնահատման մեջ ներառված մասնակիցներին հրավերով սահմանված կարգով իրականացնել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունների շտկում և հանձնաժողովին ներկայացնել փաստաթղթերի/տեղեկատվությունների շտկված տարբերակները

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Գնահատման մեջ ներառված մասնակիցների կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում իրականացվել է շտկման ենթակա անհամապատասխանությունների շտկումները և համակարգի միջոցով ներկայացվել է փաստաթղթերի/տեղեկատվությունների շտկված տարբերակները, բացառությամբ ԱՄԷ

Գրուպ ՍՊԸ-ի՝ արձանագրված անհամապատասխանությունները վերջինիս կողմից չեն շտկվել և/կամ շտկման արդյունքում ևս արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում՝ բացակայում են ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների համար հրավերի հավելված 1.3-ով սահմանված՝ «Ստորև ներկայացվում է մասնակցի անվանումը (ԱՄԷ Գրուպ ՍՊԸ-ի) իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» գրառումները, ինչպես նաև հայտում ներառված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Լրացուցիչ ստուգումն իրականացվել է էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ ՓԲԸ-ի կայքի միջոցով (https://ekeng.am/hy/sec_sub/sign_check), որն ի պատասխան ստուգման հավաստիացրել է, որ «Փաստաթուղթը ստորագրություն չի պարունակում»:

Հանձնաժողովը որոշեց.

1. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերը գնահատել բավարար, բացառությամբ ԱՄԷ Գրուպ ՍՊԸ-ի հայտի՝ գնահատել անբավարար և մերժել: Հրավերի 1-ին մասի 8.15 կետի համաձայն եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում: ԱՄԷ Գրուպ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով

Կողմ՝ 3, դեմ՝ 0

## 2. ԸՆՏՐՎԱԾ և ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված /և այդպիսին չճանաչված/ մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում, համակարգի կողմից տրամադրված պայմանագիր կնքելու որոշման մասին և ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստերի նախագծերը:

Որոշվեց՝

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարությունների տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Լ. Ավետիսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Չոբանյան ____________

Ն. Շահնազարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________